

ԱՐԵՄԱԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԸ

Իսրայէլի պատմութիւնը, երբ գայն նրկատի առնենք հոն արձանագրուած դէպքերու բարոյական նշանակութեան տեսակէտէն մանաւանդ, գերազանցօրէն «ընդհանուր ազգաց պատմութիւն»ն է. Անանուն կամ գաղափարական այն պատմութիւնը, ուրուն մէջ ամէն զեղ իր անցեալէն դաս մը և իր ներկային խրատը պիտի գտնէ յաճախ, տպաւորիչ քաղցրութեան մը ամէնէն կենդանի ազդումներով:

Այս մտածումը կը թելադրէ ինծի Ա. Թագ. Ը. Գլուխը, որ իր տեսողութեամբ պատկերին խորհուրդովը մասնաւորաբար մեր ազգային արդի պատմութեան ամէնէն այժմեական մէկ էջը կը լուսաւորէ կարծես:

Իայց կ'արժէ քանի մը գիծերով ներկայացնել հոս նախ այդ տեսարանը. — Իսրայէլացիները, որոնք, թէ՛ Եղիպատի մէջ, թէ՛ դէպի Աւետեաց երկիրը կատարած իրենց քառանամեայ արկածալից ճամբորդութեան միջոցին և թէ՛ յետոյ իրենց այդ նոր հայրենիքին մէջ, շարունակ շարունակ մէջ եղած էին քաղաքական և շինութեան առաւելութիւններով գերակշիռ ժողովուրդներու հետ, անոնց օրինակէն թելադրուած, կամ մղուած անդամադրելի զգացումէ մը, զոր հետզհետէ աւելի բնորոշակուող հասարակական կեանքի մը փորձառութիւնը ծնած էր իրենց մէջ, կանգ կ'առնուն սկզբունքի մը առջև. ուրիշ ազգերու պէս իրենք ևս պէտք է ունենան թաղաւոր՝ որ կատարէ զիրենք: — Համոզումը՝ թէ ո՛չ նախնական պարզ բարքերու հին կենցաղականոնը և ո՛չ դատաւորաց ժամանակի կրօնախառն վարչութիւնը ա՛յլ չեն կրնար բաւարար նկատուիլ զիրենք շրջապատող կեանքի նոր պայմաններուն մէջ, նուաճած է իրենց սիրտը. ուստի ամէնքը կը զիմեն Սամուէլի, աստուածակտական գրութեան վերջին պետին, ու անոր կը ներկայացնեն հանրութեան պահանջը. «Եղիցութեան և մեք իբրեւ զայլ ազգս, և դատեսցէ զմեզ դատաւորն մեր»:

Մերունին ի դուր կը փորձէ տարհանողի գանձք, մանրամասնօրէն բացատրելով թէ այդպիսի գրութիւն մը ի՞նչ անո-

ղք սաստկութիւններ պիտի բերէր իրեն հետ: Զինուորագրութեան և՛ պատերազմական բազմակերպ ծառայութեանց ահարկու հեռապատկերը կը ցուցնէ անոնց. կ'ըսէ թէ օուրքերու և տասանորդական հարկերու ճնշող բեռը ի՞նչպէս պիտի քամէր իրենց վաստակն ամբողջ:

Անօգուտ ջանք, սակայն: Ամէնքը միաբերան կ'աղաղակեն. «Ոչ այդ պէս է, այլ կացցէ թաղաւոր ի վերայ մեր». Ոչ, այդպէս չէ. մենք ալ պէտք է որ թաղաւոր ունենանք մեր վրայ: Ու Սաւուղ, քահանայապետական սուրբ համբոյրին հետ իր ճակտին վրայ բնդունելով արքայական օժուած, թաղաւոր կը կարգուի Տէրոջը ժողովուրդին:

Հին ժողովրդական աւանդալէպի մը ներկարագեղ պարզութեամբ զծագրուած այս պատկերը հասկնալի է թէ կ'արտայայտէ հոգեբանական այն տապնապը, որուն յանկարծ կ'ենթարկուի զարեւի ի վեր կրօնական վարչութեամբ ապրած ժողովուրդ մը, երբ՝ իր հոգւոյն խորը պետական կեանքի խռնալը սաղմնաւորուած միջոցին, նոյն առնէն կը խորհի այն պարտականութիւններուն մասին, զորս կ'զգայ թէ այդ նոր դրութիւնը այնուհետեւ պիտի հարկադրէ իրեն:

Համայնքներու պատմութեան մէջ ամէնէն հետաքրքրական և ամէնէն սրտազրկուած պահն է արդարեւ այն շրջանը, որ տոհմային զգացումը օր մը տեղի կուտայ ազգային գիտակցութեան առջև. Քաղաքական շափահասութեան տարիքն է այն, երբ ցեղին ոգին, նահապետական կեանքի անուշութիւններուն և տապալակական քաղաքործութեանց սխրանքներուն իր վերջին ողջոյնը տուած, անվիճելի սլացումով մը կ'ուղղուի դէպի նոր՝ հաստատուն և կազմակերպուած գոյութեան մը գաղափարը, դէպի խռնալը սեփական և ինքնուրոյն հայրենիքի մը, որ իրեն համար տեղ մը պիտի սահմանադէ տիեզերական մեծ քարտեղին մէջ, դէպի երազը ներքին միութեան մը իրականացումին, որ հնարաւոր պիտի ընէ ազգային պաշտպանութեան գործը՝ ցեղային և բնկերական պայքարի համաշխարհային գեանին վրայ:

Ամէն ժողովուրդ, մեծ կամ փոքր, որ ապագայի մը ձգտումն զգացած է իր հոգիին մէջ, անհրաժեշտաբար ունեցած է երկունքի այն ջգածութիւնները, նոր յոսանքու և նոր վիշտերու, հմայող իրաւունքներու և տաժանելի պարտականութիւններու դէմ յանդիմանութեան բախտորոշ հոգեվիճակը. և ապրած են, այսինքն իրենց զոյւթիւնը ճոնմի նախնական կենցաղէն սղլի պետական և քաղաքական կեանքին բարձրացուցած են այն ժողովուրդները միայն, որոնք կրցած են ըմբռնել և ընդունիլ մահու չափ ծանրագոյն զոհողութեանց հարկը, իբրեւ երաշխաւորութիւն ընկերային և քաղաքակրթական լայնագոյն նուաճումներով ապահովուած և ամրապնդուած տեականութեան:

Հին ժողովուրդներէն շատեր, որոնց անուններուն միայն կը հանդիպինք այսօր հին դարերու ժամանակագրութեանց ջանկերուն մէջ, ուրիշներ, որոնց անանուն անիւններէն ափ մը փոշի միայն կը մնայ այժմ թանկարաններու զգրոցներուն խորը, ամէնքն ալ՝ հազիւ ծնած՝ մեռած են պատմութեան համար, վասն զի չեն կրցած կամ չեն ուզած ենթարկուիլ զոհողութեանց հարկադրիչ օրէնքին: Ու մեծ և յառաջագէտ այն ազգերն անգամ, որոնք երկարատեւ փայլած են տնտեսական և զինուորական գերազանցութիւններով, իրենց պատուանդանին վրայ խախտած են այն օրէն, երբ իրենց գիտակցութեան մէջ պարտականութեանց զգացումը սկսած է նուազ կըշռել քան իրաւունքի ըմբռնումը. երբ հեշտ ու շուայտ կենցաղի մը հեշտութեանց մէջ կորսնցուցած են զոհողութեանց եւ խրատամբեր կեանքին կանոնը:

Ինչպէս նոյն օրէնքն է որ կը հսկէ վիթխարի կաղնիին և խոտի ձգտի մը գործարանաւորութեան եւ աճումի պայմաններուն վրայ, նոյնպէս միևնոյն սկզբունքն է որ կը վարէ մեծ ու փոքր ազգերուն կեանքն ու ճակատագիրը: Ազգային խղճմտանքը լուսաւոր է հաւասարապէս թէ՛ ամէնէն հոգի և թէ՛ ամէնէն վատոյժ ժողովուրդներուն մէջ, երբ անձնութիւններն է որ իր բոլոր ձեւերովը, կամ մանաւանդ պարագային պարտադրած կերպովը, կ'ոգեւորէ համայնքը կամ անոր առաջնորդող ընտրանին:

Հակառակ մեր թուոյն փոքրիկութեան, հակառակ ընկերային և քաղաքական դժխեմ պայմաններուն, որոնք շարունակէր ջապատեցին մեր զոյւթիւնը, ազգ մեն ենք վերջապէս: Մեր պատմութիւնը, մեր գրականութիւնը, մեր լեզուն, մեր եկեղեցին, մեր ինչ ինչ առանձնայատկութիւնները, որոնց վրայ ցեղային ինքնութեան մը դրոշմը կայ, կը հաստատեն ասիկա. և զգացման ու ձգտումի, խորքի և ալտայատկութեան այն բնորոշ նկարագիրը, որ մեր հանրային կեանքի բոլոր երեոյթներուն վրայ ինքնորոշող զիմագծութեան մը կնիքը կը դնէ, կը մատնանշէ կազմուած, կաղապարուած վիճակը ազգային գիտակցութեան մը, որուն առջև շատոնց տեղի տուած է տոհմային զգացումը:

Տեղը չէ անշուշտ հիմակ ըսել հոս թէ գիտակցական այդ վիճակը մեր մէջ զոյացուելէն ետքը, պատմական զանազան պատճառներով ինչ յեղաշրջումներու ենթարկուեցաւ մեր քաղաքական ճակատագիրը, և թէ ինչ ելեւէջներ յառաջ եկան մեր ազգային կեանքի դարաւոր իրականութեան մէջ: — Ինչ որ պիտի ուզէի մատնանշել հոս՝ այն է միայն թէ մեր պետական կեանքի վերջին կիլիկեան անկումէն ետքն ալ, իր ենթարկուած ամէնէն տխուր և ցնցող իրադարձութիւններուն միջոցին, ազգային զգացումը մեր մէջ ներքին այն թաքուն զօրութիւնը կղաւ, որուն կրթնած՝ ազգը կրցաւ միշտ ըսել կամ մտածել. «Ես ննջեմ, այլ սիրտ իմ արթուն կայ»: Ազգային գիտակցութիւնը մնաց միշտ կենդանի և ներհոգ. որ և է լուծի տակ, որ տարացեղ կամ տարակրօն ուժերէ կուգար մեր վրայ, հոգին մնաց միշտ վառ և զգաստ. և այս՝ շնորհիւ միայն Հայաստանեայց եկեղեցիին, որ մայրական սիրոյ խանդաղատանքով պահեց և պահպանեց մեր անցեալին յուշերը և ապագային յոյսերը, մինչև որ, նուիրական օր մը, ժողովուրդն ամբողջ, առհաւութեան բնազդներէ թէ չթաղուած կուշումի մը յայտնատեսութենէն մղուած, կամեցաւ և պահանջեց որ իրեն վերադարձուն աշխարհի վրայ ուրիշ ազգերու պէս իր ներկան տնտեսելու և ապագան տրնօրինելու օրէնքն ու իրաւունքները:

Արեւմտեան տեսարանն է որ կրկնուեցաւ այն ատեն Արարատի ստորոտը, ալե-

ւոր հայրապետը, Էջմիածնի հովանիին ներքե խմբուած հոյլը օրհնած տառն, կը թը-ւէր ազգին խղճմտանքին նոյն իսկ ուղղել Սամուէլի աշն հարցումը թէ կարելի պիտի ըլլայ սակայն վերջնել մեծ բեռը նոր եւ ծանր պարտականութիւններուն, զոր պե-տական կեանքի վարչաձեւը պիտի բերէր իրեն հետ:

Մնացեալը յայտնի է. այսինքն ծանօթ է օրտաթուեղ ոգևորութեամբ հանդիսա-ւորուած պատասխանը, չոր ի ոսկիւս աշ-խարհի ցրուած Հայութիւնը անդրադար-ձուց իրեն ուղղուած այդ հարցումին:

* * *

Պահանջը, չոր ազգին լրութիւնը ներ-կայացուց իր ճակատագրին հոգը պարա-զայից բերմամբ ստանձնած եկեղեցական իշխանութեան, տարակոյս չկայ թէ որքան բանաւոր նոյնքան իրաւացի էր ինքնին: Աշխարհի իրադարձութեանց յորձանուտին մէջ աշխարհիկ վարչութիւն մը միայն կըր-նայ, առանց երկուանքի եւ երկուութեան տարօրինակութեանց ենթարկելու ինքզին-քը, ազգային կեանքի նաւը առաջնորդել զէպի իր կոչումին հանգրուանը: Եկեղե-ցական կառավարութիւն մը, որքան բարձ-րօրէն բարեացակամ եւ անկեղծ զգացում-ներով ալ տողորուած ըլլան իր անդամնե-րը, իբրեւ բարոյական հեղինակութեան վը-րայ միայն կրթնած իշխանութիւն, որուն կը պակսին արդարութեան խտտութիւնը գործադրելու միջոցներն ու պատշաճու-թիւնները, ի վիճակի չի կրնար ըլլալ երբեք լիով եւ ճշգրիտ իրադրութիւն երկրին շահերն ու իրաւունքները հետապնդելու, կարգն ու խաղաղութիւնը պահպանելու եւ ժողո-վուրդը իր ազգային եւ մարդկային պար-տականութեանց մղելու պաշտօնը, որ գործն է խղճամիտ եւ հայրենասէր կառավարու-թեանց:

Պատմութիւնն ու փորձագութիւնը կը հաստատեն այս տեսութեան ճշմարտու-թիւնը: Արդի Իտալիան, իբրեւ ազգ եւ հայ-րենիք, իրական յառաջդիմութեան եւ քա-ղաքական զարգացման ճամբուն մէջ մտաւ այն օրէն, երբ թօթափելով եկեղեցապե-տական վարչութեան լուծը, ունեցաւ քա-ղաքային եւ զինուորական օրէնսդրութեամբ կազմակերպուած կառավարութիւն մը, որ

կէս դարու միջոցին իր երկրին տուաւ շատ աւելի կանոնաւորութիւն՝ ապահովութիւն եւ ազգային միութիւն, քան ինչ որ ամ-բողջ տասը դարեր անոր չէր տուած պա-պական իշխանութիւնը: — Միեւնոյն իրո-շութիւնն է որ մինչեւ ցայսօր կը շեշտուի հին եւ նոր աշխարհներու մէջ: Ընդհանուր առմամբ յետաձեռն եւ տակաւին այն եր-կրները, ուր կրօնքը, շեղած իր բուն հո-գեօր դերէն, կը ջանայ այս կամ այն կեր-պով վարել երկրին քաղաքականութիւնը, աշխարհիկ ձեւին տակ իսկապէս կրօնական կառավարութիւն մը գործադրելով:

Եկեղեցական իշխանութիւնը, երբ դուրս կ'ենէ իր կալուածէն, հոգեօր կեանքի մը-շակութեան դաշտէն, եւ կ'սկսի գործել քա-ղաքական կամ պետական շարժառիթնե-րով, ամէնէն աղիտաւոր բռնապետութեան ձեւը կ'առնու ընդհուպ. վասնզի բացար-ձակ ճշմարտութեան աւանդապահի զգա-ցումը, որ հոգեօր ասպարէզին մէջ բարձ-րագոյն առաքինութեանց աղբիւր է իրեն համար, անդին, քաղաքականին մէջ, կը դառնայ անողոք սաստիկութեանց սալ մը, որուն վրայ կը դարբնուի սրտի եւ մտքի կապանքներու շղթան:

Այս նկատողութիւնը պէտք չէ բնաւ առնուի անշուշտ իբրեւ ակնարկութիւն Հայ եկեղեցւոյ կողմէ այդ ոգևոր եւ ուղ-ղութեամբ կատարուած որեւէ արարքի մը. կարելի չէ այդպիսի վերագրում մը ընել անոր: Իր ժողովուրդին կեանքին վրայ քա-ղաքականօրէն տիրակալելու ոչ մէկ առիթ կամ փորձութիւն ունեցած է անիկա ամբողջ իր գոյութեան միջոցին. նախ՝ որովհետեւ իր հոգիին իսպառ անծանօթ մնաց այդպիսի բերում մը, եւ յետոյ, որովհետեւ ազգը իր քաղաքական անկախութիւնը կորսնցու-ցած է միշտ օտար նուաճումներու եւ ո՛չ թէ եկեղեցական ազդեցութեանց առջեւ: Մեր նպատակն է մատնանիլ ընել միայն թէ ո՛րքան բանաւոր եւ արդար էր Հայու-թեան իղձը ազգային՝ ինքնուրոյն եւ աշ-խարհիկ կառավարութիւն մը ունենալու մասին, եւ միեւնոյն տառն զգացնել թէ ո՛ր-քան հոգեբանական եւ հիմնաւոր էր մը-տահոգութիւնը, զոր ժողովուրդը կամ ա-նոր մէկ մասը ունեցան հաւանաբար ա-ռաջին իսկ օրէն, խորհելով թէ պիտի կա-րենա՞յ արդեամբ եւ արժանեօք վերջնել բե-

որ, զոր նոր իրականութիւնը կը կապէր այսպէս իր ուսերուն:

Այս հարցումն է ահա, որ, իմ տեսութեամբ, կը մնայ դեռ հարց՝ արժանի հանրական ուշադրութեան, և կարօտ՝ ազգովին նկատաւան:

Այս հարցին ստացած լուծումը և այդ հարցումին տրուած պատասխանն է անշուշտ որ պիտի լինին չափանիշ հայուն ազգային զգացման խորութեան և անկեղծութեան. ատենց միջոցաւ է որ աշխարհ համարէն պիտի համոզուի թէ հայրենասիրական ջերմութիւնը, որ այս զարուն բակիցը և անցեալին վերջերք անգամ մըն ալ տաքցուց մեր սիրտերը, արդիւնք էր ոչ թէ պատահական կայծերէ կրակ առած յարգի բոցերու, այլ շմարած հին ու թանձր խանձողներու՝ զորս մաքուր և կենդանի ձեռքեր անթեղած էին ազգին հոգիին խորագոյն ալքերուն մէջ:

Կ'ընդունիմ թէ ընդհանուր առմամբ ժամանակին զործը պիտի ըլլայ ընել այս ճշգումը. թո՛ղ ընդունուի սակայն միեւնոյն ատեն թէ, առ հասարակ, ձեռնարկի մը սկզբնաւորման առաջին կերպն ու պայմանները շատ քան կը հասկցնեն անոր ապառնի ընթացքին և լինելութեան մասին:

Արդ, ժամանակն է որ ամէնքս, իւրաքանչիւրն ինքն իր վրայ անդրադարձութեամբ, խելամտինք խնդրին էութեանը, մեր խզի՛ ատեանին առջև հանելով հարցը, և քննելով զայն առանց որեւէ կանխակալ զգացման:

Համոզուած է նախ ամէն հայ թէ Արարատի ստորոտը կազմուած ազգային-քաղաքական գոյամի՛նակը ցնորախոհանքի մը մէջէն ընդհամարուած պատկեր մը չէ բնաւ, այլ ապրող և զարգացումի ընդունակ իրականութիւն մը. — եթէ այո, ինչպէս քաղցր է հաւատալ, այս համոզումը օրտերուն մէջ ծնա՛ծ է այդ իրականութեան և անով արտայայտուած զազափարին նկատմամբ յարատեւ և անհաճանջ նուիրումի մը սկզբունքը:

Կ'ընա՛նք ըսել թէ ի՛նչ է զոհողութեան կեանքը ազգութեան մտատիպարին առջև, և ո՞րն է բաժինը չոր ամէն Հայ պարտի իր սրտէն ու մաքէն, իր կեանքէն ու ինչքէն, իր նիւթական և հոգեկան կարողութիւններէն ընծայարերել վերածնած

Հայրենիքի սեղանին:

Հարցումներ՝ որոնք Արեւմտեամբ պատգամը կը յիշեցնեն, և որոնց պատասխանը լա՛ւ է որ ամէն մարդ լսէ իր սրտին լուսութեանը մէջէն . . .

Իսկ ինձ թող ներուի՛ անգամ մըն ալ սղեկուել քանի մը հինցած ազգերու մէջ զազազուած խորհուրդը երկրպագելի տեսարանի մը, որ պիտի մնայ երեւակայութեանս մէջ նկարուած ամէնէն անուշ պատկերներէն մին.

— «Տեսի զերասօ յԱյրարատ, զեռահոսեալ արասուք . . .

Դամբան, աւերս, համակեալս յեղբոս նորա ի խոր սուգ:

Վրե՛սեմականքն Մասիս, ժամանակաց իշխեցող,

Ձազամանդեայ արասուեաց հեղոյր զնոքօք ջինջ բզոց:

Եւ ծիածան եօթներեկան, ի սուրբ կայաց տապանին,

Կամարանայր զեղափայլ մինչ անդր ուր էջք ևն բանին:

Սակայն, եհէ՛, յայսպիսեաց աւերակացն ի միջի—

Տեսէ՛ք զիա՛րդ Արամայն անկորուստ ձեռ բողբոջի:

Գնար բերթողին զօռեացն կախեալ կողբոց թրթոյս անդ,

Ի շունչ քաղցրիկ ապառնեացն բղձից՝ ուխտից երկնաւանդ:

Ով սուրբ յուսոյն անմահի,

Որ անդ յաւերսն պահի:

Գանիրե

ԹՈՐԳՈՒ ԵՊԻՍԿՈՍՈՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՍԿՈՆԵ

ԵՐԵՔ ՈՂԿՈՅԶՆԵՐԷ

Յակոբիկ, որքն ունի երեխ ողկոյզներ:
Առաջինին խրեկ հեշաւեք վրձիս.
Խրեկ՝ միսին կարճ ու քնուշ մոռացօցն.
Եւ . . . ա՛յ մի՛ խրեկ.

Բանգի քնն և երրորդն, ու սուր նայումով
Կը հսկի սև քննին մէջ ցա՛ւր, զիցի.
Եւ կը գոչի քարձըր արցունք մը լընիկ
Արդին իսկ լացուած:
Թրգմ. ՆԵՍՍԻՐ

